



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center *for*
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության
բարեփոխման նախաձեռնություն

Հանքարդյունաբերական և չրջակա միջավայրի խնդիրներին առնչվող դատական գործերի վերլուծություն

Հայկ Ալումյան
Փաստաբան

Դեկտեմբեր 2016

mlri.crm.aua.am

Հանքարդյունաբերական և շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող դատական գործերի վերլուծություն

Հայկ Ալումյան (2016)

Հանքարդյունաբերական և շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող դատական գործերի վերլուծություն,

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հիմնաբառեր` Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Դատական գործեր, Շրջակա միջավայր

Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://mlri.crm.aua.am>:

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊԴԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://crm.aua.am>:

Ինչպես հղում անել այս զեկույցին

Ալումյան, Հ. (2016): Հանքարդյունաբերական և շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող դատական գործերի վերլուծություն, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.aua.am>:

Ներածություն

Ստորև ներկայացված է հանքարդյունաբերական և բնապահպանական խնդիրներին առնչվող դատական մի շարք գործերի մանրամասն վերլուծություն: Անդրադարձ է կատարվել Հայաստանի վարչական և քաղաքացիական դատարաններում գտնվող գործերին, որոնք վերաբերվել են շրջակա միջավայրի պաշտպանությանն ու վնասին, սեփականության և զբաղվածության խնդիրներին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանին համապատասխան որոշումներին:

Հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի խնդիրների հետ առնչվող դատական գործերի աղյուսակային ամփոփում

Գործի առարկան	Դատարան	Վերլուծված գործերի թիվը
Շրջակա միջավայրի պաշտպանություն և վնաս	Վարչական դատարան	4
Սեփականության վեճեր	Քաղաքացիական դատարան	10
Աշխատանքային վեճեր	Քաղաքացիական դատարան	8
Ա) Օրիուսի կոնվենցիայի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը Բ) Վարչական դատավարության օրենսգրքին	Սահմանադրական դատարան	2
Անձնական կյանք և ընտանեկան իրավունքներ	ՄԻԵԴ	5

Շրջակա միջավայրի պաշտպանություն և վնաս.

1. Վարչական գործ թիվ ՎԴ/3275/05/091

Գործի հանգամանքները համառոտ կայանում են հետևյալում. Հայաստանի Լոռու մարզը երկրի՝ կենսաբազմազանությամբ հարուստ տարածաշրջաններից է: 1970-ականներին Թեղուտ և Շնող գյուղական բնակավայրերի հարևանությամբ հայտնաբերվեցին պղնձի և մոլիբդենի պաշարներ (այսուհետ՝ «պաշարներ»): 2001 թ. ապրիլի 8-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը պաշարների շահագործման 25 տարվա լիցենզիա շնորհեց «Մանեքս և Վալեքս» ՓԲԸ-ին՝ «Արմենիան քափր փրոգրամ» ձեռնարկողի իրավանախորդին: 2004 թվականին, «Կոնցեսիայի մասին» 2002 թ. օրենքի միջոցով Հայաստանի օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում «Արմենիան քափր փրոգրամ»-ի հանքարդյունահանման հատուկ

1 Այսպես կոչված <<Թեղուտի գործ>>, որը վերաբերում է Թեղուտի հանքավայրին:

լիցենզիայի ձևն անհրաժեշտ եղավ վերանայել, սակայն դրա պայմանները և տևողությունը մնացին անփոփոխ: Վարչապետի որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որին հանձնարարվեց ուսումնասիրել և համակարգել Թեղուտի շահագործման ծրագրին օժանդակող աշխատանքները: 2005 թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ հանձնաժողովը հաստատեց պաշարների շահագործման հայեցակարգը: Ընդհանուր առմամբ Հայաստանի օրենսդրությամբ (այսինքն՝ Ընդերքի մասին 1992 թ. օրենսգրքով և «Կոնցեսիայի մասին» 2002 թ. օրենքով) չի պահանջվում այդօրինակ հայեցակարգի հաստատում:

Ձեռնարկողը 2006 թվականին նախաձեռնեց ՇՄԱՓ ընթացակարգի իրականացումը: Բնապահպանության նախարարության համակարգմամբ որոշումների կայացման գործընթացը ներառում էր ՇՄԱՓ ընթացակարգի երկու փուլեր, որոնցից յուրաքանչյուրում տեղի ունեցան հանրային լուսմներ: ՇՄԱՓ փաստաթղթերի վերաբերյալ լուսմների հայտարարությունը հրապարակվեց «Հայաստանի Հանրապետություն» թերթի 2006 թ. մարտի 17-ի համարում, լուսմներն անցկացվեցին 2006 թ. մարտի 23-ին, իսկ դրական մասնագիտական եզրակացությունները ստացվեցին 2006 թ. ապրիլի 3-ին: Նախագծի աշխատանքային փաստաթղթի ուսումնասիրման մասով լուսմների հայտարարությունը հրապարակվեց «Հայաստանի Հանրապետություն» և «Իրավունք» թերթերի 2006 թ. սեպտեմբերի 28-29-ի համարներում, լուսմներն անցկացվեցին 2006 թ. հոկտեմբերի 12-ին, իսկ դրական մասնագիտական եզրակացությունը ստացվեցին 2006 թ. նոյեմբերի 7-ին: 2007 թ. նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունեց որոշում, որով 735 հեկտար հող հատկացրեց ձեռնարկողին 50 տարի ժամկետով, հանք կառուցելու նպատակով, ներառյալ 357 հեկտար անտառային տարածքը հատելու իրավունքը: Կառավարության և ձեռնարկողի միջև լիցենզիայի պայմանագիրը կնքվեց 2007 թ. սեպտեմբերի 8-ին:

Հայցադիմումը

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունները դատարան են ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ կառավարության, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, երրորդ անձ «Արմենիա Զափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի պահանջելով՝

- 08.02.2001 թվականին «Արմենիա Զափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված Թեղուտի հանքի շահագործման թիվ ՀՎ-ՄՇ-13/33 լիցենզիան ճանաչել ուժը կորցրած:
- Առոչինչ ճանաչել ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 03.04.2006 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-31 դրական եզրակացությունը, ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 07.11.2006 թվականին հաստատված

շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-135 դրական եզրակացությունը, «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» ՀՀ կառավարության 01.11.2007 թվականի թիվ 1278-Ն որոշումը:

- Անվավեր ճանաչել 23.03.2004 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքարդյունահանման թիվ ՀՎ-Լ-14/90 հատուկ լիցենզիան, «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու ՀՀ բնապահպանության նախարարության միջև 09.10.2007 թվականին կնքված թիվ 316 «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզիայի պայմանագիրը», 29.12.2005 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության թիվ 21 հատուկ լիցենզիան, 04.05.2006 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության միջև կնքված «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության» թիվ 140 լիցենզային պայմանագիրը, Թեղուտի հանքավայրի զարգացման ծրագրի աջակցման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.09.2005 թվականի նիստում ընդունված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հայեցակարգը:
- Պարտավորեցնել պատասխանողներին դադարեցնել «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները:

Առաջին ատյանի դատարանի կայացրած ոչոշումը

ՀՀ վարչական դատարանի 09.07.2009 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն, վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները ... վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը /ֆիզիկական կամ իրավաբանական/, որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես չափազանցված են վարչական մարմինների իրավաչափ գործողությունների մեջ»: Ի հիմնավորումն իր որոշման, Վարչական դատարանը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը և 15-րդ հոդվածը, ինչպես նաև «Շրջակա միջավայրի

ամնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Կոնվենցիայի /Օրհուսի կոնվենցիա/ 9-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոքարկումը

09.07.2009 թվականի որոշման դեմ բողոք են ներկայացրել «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և «Էկոդար» հասարակական կազմակերպությունը, որը ՀՀ վարչական դատարանի 28.07.2009 թվականի որոշմամբ մերժվել է: «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և «Էկոդար» հասարակական կազմակերպությունը այս որոշումների դեմ ներկայացրել են վճռաբեկ բողոք:

Չուզահեռաբար, 2009 թվականի հոկտեմբեր ամսին, հայցվորները դիմում են ներկայացրել Օրհուսի համապատասխանության կոմիտե, խնդրելով ճանաչել, որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը, 9-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև՝ դրանց հետ կապված՝ 2-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը²:

ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Էկոդար» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009 թվականի որոշման՝ «Էկոդար» ՀԿ-ի բողոքը մերժելու մասը ու այդ մասով բողոքը բավարարվել է: Որոշման՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի բողոքը մերժելու մասը, թողնվել է օրինական ուժի մեջ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն չունի բնապահպանական հարցերով դատարան դիմելու իրավունք, քանի որ այդ կազմակերպության կանոնադրության մեջ բացակայում են բնության պաշտպանության հետ կապված նպատակների վերաբերյալ նշումներ: Իսկ «Էկոդար» ՀԿ-ն, ըստ Վճռաբեկ դատարանի, այդպիսի հայցեր ներկայացնելու իրավունք ունի, քանի որ կանոնադրության մեջ առկա է բնապահպանական խնդիրներին վերաբերող դրույթ: Վճռաբեկ դատարանն այս որոշման մեջ արտահայտել է կարևոր դիրքորոշում, կապված դատարան դիմելու իրավունքի հետ:

“Սույն գործով Դատարանը [նկատի ունի վարչական դատարանը՝ երեք դատավորի կազմով] մերժել է ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ հայցվորների բողոքն այն պատճառաբանությամբ, որ վերջիններս

² Այս գանգատի հետագա ճակատագրի վերաբերյալ տվյալները ներկայացվում են սույն վերլուծության առանձին հատվածում, որը վերաբերում է Օրհուսի համապատասխանության կոմիտեում Հայաստանի գործերին:

ակնհայտորեն չունեն այն ներկայացնելու իրավունք, քանի որ այդ հասարակական կազմակերպությունների իրավունքները վիճարկվող պահանջով չեն խախտվել և չեն շոշափվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ “Էկոդար” բնապահպանական հասարակական կազմակերպությունը “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցված ոչ կառավարական կազմակերպություն է, համապատասխանում է ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին և, հիմք ընդունելով կանոնադրությամբ ամրագրված նպատակն ու խնդիրները, պաշտոնապես է շրջակա միջավայրի պահպանության հարցերով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով “Էկոդար” բնապահպանական հասարակական կազմակերպությունը Օրիոսի կոնվենցիայի իմաստով “շահագրգիռ” կազմակերպություն է, հետևաբար օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից:

Նման պայմաններում անհիմն է Դատարանի կողմից “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով “Էկոդար” բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունման մերժումը”:

Վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի որոշումից հետո Վարչական դատարանի համար պարտադիր էր դարձել “Էկոդար” ՀԿ-ի հայցադիմումի քննությունը: Ուստի՝ Վարչական դատարանը հայցադիմումն ընդունեց վարույթ և 24.03.2010 թվականին հրավիրել է դատական նիստ: Այդ նիստում ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել՝ արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ և, առանց գործի քննությունը սկսելու, հեռացել է խորհրդակցական սենյակ: Նույն օրը Վարչական դատարանը վճռել է հայցը մերժել՝ որպես ակնհայտ անհիմն: Իր այս վճռի պատճառաբանական մասում Վարչական դատարանը կրկնել է իր 09.07.2009 թվականի որոշման հիմնավորումները:

“Անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այն նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն, վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները, ... վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը /ֆիզիկական կամ իրավաբանական/, որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ”:

Որից հետո, վկայակոչելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը և 15-րդ հոդվածը, Վարչական դատարանը եկել է այսպիսի հետևություն.

“Ինչպես հասարակական կազմակերպությունների մասին օրենքով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության որևէ այլ օրենքով սահմանված չէ հասարակական կազմակերպությունների կողմից ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել: Ավելին, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածից բխում է, որ նրանք այդպիսի իրավունք չունեն”:

Այս որոշումը “Էկոդար” ՀԿ-ի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է, ընդ որում, Վճռաբեկ դատարանը բերել է այնպիսի պատճառաբանություններ, որոնք տրամազծորեն հակասում են հենց իր՝ 30.10.2009 թվականի որոշման պատճառաբանություններին: Այսպես, 01.04.2011 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է.

“ՀՀ Սահմանադրական դատարանն իր 07.09.2010 թվականի ՍԴՈ-906 որոշմամբ քննության առարկա է դարձրել դիմողի դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ, քան այն անձինք, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ “խախտվել” բառից հետո “նրա” արտահայտությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ “խախտվել” բառից հետո “նրա” արտահայտությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են: ... ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով, գործողությամբ կամ անգործությամբ³»:

³ Ինչպես կարելի է նկատել, իր նախկին դիրքորոշումից շեղվելու համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել Սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի որոշումը, որը կայացվել է Վճռաբեկ դատարանի առաջին որոշումից մինչև երկրորդ որոշումն ընկած ժամանակահատվածում: Սակայն, ուշադրությամբ ուսումնասիրելով Սահմանադրական դատարանի որոշումը, կարելի է նկատել, որ դրանում արտահայտված դիրքորոշումները համահունչ են Վճռաբեկ դատարանի առաջին որոշմանը և հակասում են Վճռաբեկ դատարանի երկրորդ որոշմանը: Սահմանադրական դատարանի այս որոշման մասին ավելի մանրամասն խոսվում է սույն վերլուծության համապատասխան հատվածում:

Դիմում Օրհուսի համապատասխանության կոմիտե

Պետք է նկատել, որ այս գործի հետ կապված “Էկոդար” և “Թրասփարենսսի Ինտերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն” ՀԿ-ները երկու անգամ դիմել են Օրհուսի համապատասխանության կոմիտե, պնդելով, որ Հայաստանի Հանրապետությունը խախտում է Օրհուսի Կոնվենցիայի դրույթները: Առաջին դեպքում Օրհուսի համապատասխանության կոմիտեն գտավ, որ՝ “Թեդուտի” հանքավայրի վերաբերյալ որոշումներ ընդունելիս խախտվել է շահագրգիռ հասարակության իրավունքը՝ ամենավաղ փուլերից տեղեկանալու նախատեսվող գործունեության մասին և մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին: Իսկ երկրորդ դեպքում /արդեն Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումից հետո/ Կոմիտեն ճանաչեց, որ խախտվել է “Էկոդար” ՀԿ-ի՝ դատական պաշտպանության դիմելու իրավունքը⁴:

1.1 Թեդուտի հանքավայրի հետ կապված Օրհուսի համապատասխանության կոմիտե ներկայացրած առաջին հաղորդումը ACCC/C/2009/43.

2009 թվականի սեպտեմբերի 23-ին «Թրասսփարենսսի Ինտերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Էկոդար» և «Վանաձորի հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» ՀԿ-ները Օրհուսի համապատասխանության կոմիտեին են ներկայացրել հաղորդում, որում նշել են, որ Հայաստանի Հանրապետությունը չի կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով և 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտավորությունները: Հաղորդման մեջ նշվել է, որ Մասնակից պետությունը. (ա) շահագրգիռ հանրությանը վաղ փուլում չի տեղեկացրել լիցենզիայի վերաբերյալ որոշման կայացման մասին, (բ) չի ապահովել հանրության արդյունավետ մասնակցությունը՝ սկսած վաղ փուլերից, (գ) հաշվի չի առել հանրության մասնակցության արդյունքները որոշումների կայացման մեջ, և (դ) հանրությանն ընդհանրապես չի տեղեկացրել լիցենզիաների ժամկետը երկարաձգելու մասին, կամ հանրությանն այդ մասին տեղեկացրել է միայն լիցենզիաների տրամադրումից հետո: Բացի այդ, հաղորդման մեջ նշվել է, որ՝ չճանաչելով լիցենզիաների օրինականությունը Հայաստանի դատարաններում բողոքարկելով՝ Հաղորդողների շահը, և մերժելով նրանց հայցի ընդունումը, Մասնակից պետությունը չի կատարել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իր պարտավորությունը:

Հաղորդողները պնդել են, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային մասնակցության վերաբերյալ դրույթները կիրառելի են բոլոր այն որոշումների նկատմամբ, որոնք բողոքարկվել են Հայաստանի դատարաններում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1(ա) կետի և հավելվածի 16-րդ կետի համադրության հիման վրա: Այնուհանդերձ, Հաղորդողները գտնում էին, որ Մասնակից պետությունը համապատասխան որոշումները կայացնելիս չի ապահովել Կոնվենցիայի՝ հանրային մասնակցությանը վերաբերող պահանջների կատարումը:

⁴ Կոմիտեի այս որոշումները ավելի մանրամասն կերպով ներկայացվում են ստորև՝ 1.1 և 1.2 կետերում:

Հաղորդողները նաև պնդել են, որ Հայաստանի օրենսդրության համաձայն, միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 2005 թ. սեպտեմբերի 30-ին ընդունված հայեցակարգը պետք է ենթարկված լիներ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգի:

Ավելին, Հաղորդողները պնդել են, որ շահագրգիռ հանրությունը որոշումների կայացման գործընթացում բավականաչափ վաղ չի տեղեկացվել և չի ստացել որևէ տեղեկատվություն 6-րդ հոդվածի 2 (ա), (բ), (դ) և (ե) կետերով նախատեսված տարրերի վերաբերյալ, որն իրեն հնարավորություն կընձեռեր նախապատրաստվելու 2006 թ. մարտի 23-ին և 2006 թ. հոկտեմբերի 12-ին կազմակերպված հանրային լսումներին: Այդ առումով, Հաղորդողները պնդել են, թե 2006 թ. մարտի 23-ի հանրային լսումը կազմակերպվել է պաշարի շահագործման հատուկ լիցենզիան ձեռնարկողին արդեն իսկ տրամադրելուց հետո, որ նշված երկու լսումներում շահագրգիռ հանրությանը ներկայացված տեղեկատվությունը չի եղել համապարփակ, և որ հանրությունը երբևէ չի ծանուցվել հողահատկացմանն առնչվող որոշումների (2007 թ. նոյեմբերի 1-ի որոշում) մասին և չի ներգրավվել դրանց կայացմանը, ինչպես նաև չի տեղեկացվել կառավարության և ձեռնարկողի միջև այդ մասին պայմանագրի կնքմանը (8 սեպտեմբեր 2007 թ.):

Հաղորդողները պնդել են, որ հանրային լսումները 2006 թվականին կազմակերպվել են այն ժամանակ, երբ կարևորագույն որոշումներն արդեն կայացվել էին իրավասու մարմինների կողմից (շահագործման հատուկ լիցենզիան տրվել էր ձեռնարկողին 2004 թվականին, նախագիծը միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել էր 2005-ին), որը նշանակում էր, որ շահագրգիռ հանրությունը հնարավորություն չէր ստացել՝ արդյունավետորեն մասնակցելու որոշումների կայացմանը՝ ի խախտումն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջի:

Հաղորդողները պնդել են, որ Մասնակից պետությունը հաշվի չի առել որոշումների կայացման գործընթացին հանրության մասնակցության արդյունքները, և որ հանրությունը որոշումների մասին տեղեկացվել է միայն դրանց ընդունումից հետո: Ուստի, Հաղորդողները պնդել են, որ Մասնակից պետությունը չի կատարել 6-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի պահանջները: Հաղորդողները նաև պնդել են, որ Մասնակից պետությունը, շահագրգիռ հանրությանը չտեղեկացնելով ձեռնարկողին 2001 թվականին տրված՝ հանքարդյունահանման լիցենզիան 2004 թվականին երկարաձգելու մասին, խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջը:

Հաղորդողները պնդել են, որ Մասնակից պետությունը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, քանի որ վարչական դատարանը մերժել է ընթացակարգը վերանայելու մասին իր հայցն այն հիմքով, որ համապատասխան վարչական վարույթը չի ազդել իրավունքների և շահերի վրա, ինչպես նաև այն պատճառով, որ վճռաբեկ դատարանը մերժել է բողոքը «Թրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության մասով:

Ի վերջո, Չաղորդողները պնդել են, որ Մասնակից պետությունների հանդիպման III/6b որոշմամբ հաստատված Կոմիտեի թիվ ACCC/C/2004/08 հանձնարարականի ընդունումից հետո Չայաստանում եական առաջընթաց տեղի չի ունեցել:

Կոմիտեն ընդունել է հետևյալ եզրակացությունները.

Կոմիտեն եզրակացրել է, որ՝ Չայաստանի Չանրապետությունը “Թեղուտի” գործով չի կատարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերի պահանջները:

Վերը նշվածի կապակցությամբ, Կոմիտեն տվել է հետևյալ հանձնարարականները.

“Առաջնորդվելով Մասնակից պետությունների հանդիպման I/7 որոշման հավելվածի 36 (բ) կետով, ինչպես նաև՝ հաշվի առնելով սույն գործով Մասնակից պետության համաձայնությունն առ այն, որպեսզի Կոմիտեն իրագործի I/7 որոշման հավելվածի 37 (բ) կետում նշված միջոցառումը, Կոմիտեն խորհուրդ է տալիս Չայաստանի Չանրապետության կառավարությանը՝ ձեռնարկելու օրենսդրական, կարգավորիչ և վարչական անհրաժեշտ միջոցներ և կատարելու գործնական քայլեր՝

ա) Իրականացնել անհրաժեշտ օրենսդրական միջոցառումներ, որոնցով.

(i) Կապահովվի ՇՄԱՓ ընթացակարգի ենթակա գործունեության նվազագույն շեմերի հստակ սահմանումը,

(ii) Չնարավորինս կպարպաբանվի տարբեր ակտերի իրավական նշանակությունը, որպեսզի առավել հստակորեն տարբերակվեն 6-րդ և 7-րդ հոդվածների շրջանակում կայացվող որոշումները,

(iii) Կապահովվի որոշումների կայացման գործընթացում հանրության հնարավորինս վաղ իրավեկումը, երբ բոլոր տարբերակները դեռ հնարավոր են, և կսահմանվեն ողջամիտ ժամկետներ, որոնցում հանրությունը կկարողանա ծանոթանալ նախագծին առնչվող փաստաթղթերին և մեկնաբանություններ ներկայացնել դրանց վերաբերյալ,

(iv) Չնարավորինս հստակորեն կսահմանվեն հանրության մասնակցության ընթացակարգերի կապակցության մասով տարբեր սուբյեկտների (պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, ձեռնարկողներ) պարտականությունները:

բ) Կապակցել կոնկրետ ծրագրերի ՇՄԱՓ փաստաթղթերի բնապահպանական փորձաքննության վերջնական եզրակացությունների մասին շահագրգիռ հանրության անհապաղ ծանուցման համակարգ, օրինակ՝ բնապահպանության նախարարության ինտերնետային կայքի միջոցով”:

1.2. Թեղուտի հանքավայրի հետ կապված Օրիուսի համապատասխանության կոմիտե ներկայացրած երկրորդ հաղորդումը ACCC/C/2011/62.

Ինչպես երևաց վերևում նկարագրված գործընթացներից՝ Թեղուտի վերաբերյալ ներկայացված առաջին հաղորդման քննության ժամանակ ՀՀ Վճռաբեկ դատարանը արդեն իսկ կայացրել էր իր 30.10.2009 թվականի որոշումը, որով արտահայտել էր այն իրավական դիրքորոշումը, որ՝

««Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունը «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցված ոչ կառավարական կազմակերպություն է, համապատասխանում է ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին և, հիմք ընդունելով կանոնադրությամբ ամրագրված նպատակն ու խնդիրները, պատվում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով: Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունը Օրիուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Սա էր պատճառը, որ Օրիուսի համապատասխանության կոմիտեն, արձանագրելով Հայաստանի կողմից թույլ տրված մի շարք խախտումներ /տես՝ նախորդ կետում/, այնուհանդերձ չգտավ Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

Իրավիճակը փոխվեց, երբ «Թեղուտի» գործի ներպետական հետագա քննության ընթացքում Վճռաբեկ դատարանը փոխեց իր իրավական դիրքորոշումները և 01.04.2011 թվականի որոշման մեջ բերել է այնպիսի պատճառաբանություններ, որոնք տրամազծորեն հակասում են իր՝ 30.10.2009 թվականի որոշման պատճառաբանություններին. « ... ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են: ... ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով, գործողությամբ կամ անգործությամբ»:

Վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի որոշումից հետո «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունը կրկին դիմեց Օրիուսի համապատասխանության կոմիտե՝ այս անգամ միայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման հիմքով / հաղորդումը ACCC/C/2011/62/: Կոմիտեն, իր 16.06.2013 թվականի որոշմամբ եզրակացրեց, որ «Թեղուտի» գործով Հայաստանի Հանրապետության կողմից թույլ է տրվել նաև Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում: Կոմիտեն, ի թիվս այլի, եզրակացրել է, որ՝ **թեև Հայաստանի օրենսդրության ձևակերպումները**

չեն հակասում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետին, սակայն Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը, որում ասված է, որ համապատասխան բնապահպանական ԶԿ-ն չունի դատավարական իրավասուբյեկտություն, չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված նորմերին:

2014 թվականի հունիսի 30-ին և հուլիսի 01-ին Օրիուսի կոնվենցիայի կողմերի խորհրդակցության ընթացքում ընդունվել է թիվ V/9a որոշումը, կապված Հայաստանի Հանրապետության կողմից Օրիուսի կոնվենցիայով իր վրա վերցված պարտավորությունների կատարման հետ: Այդ փաստաթղթում, ի թիվս այլի, ասված է՝

« [Կոմիտեն] կոչ է անում Կողմին արագացնելու շրջակա միջավայրի վրա ապդեցության գնահատման մասին /ՇՄԱԳ/ նոր օրենքի լրամշակման և ուժի մեջ դնելու գործընթացը, ներառյալ հասարակության մասնակցության վերաբերյալ դրանում նախատեսված գործընթացների,

Առաջարկում է համապատասխան կողմին՝ ընդունել անհրաժեշտ օրենսդրական, նորմատիվ և վարչական միջոցներ, ինչպես նաև՝ գործնական բնույթի միջոցներ ապահովելու համար, որպեսզի.

i. հստակ սահմանվեն շեմային ցուցանիշները գործունեության այն տեսակների համար, որոնց նկատմամբ ենթակա է կիրառման ՇՄԱԳ-ը, ներառյալ հասարակության մասնակցության ընթացակարգերը,

ii. հասարակությունը հնարավորինս շուտ տեղեկացվի որոշումների ընդունման գործընթացում, երբ բաց են պանապան տարբերակների քննարկման հնարավորությունները, ինչպես նաև՝ սահմանվեն ողջամիտ ժամկետներ, այն, հաշվով, որպեսզի հասարակությունը կարողանա ծանոթանալ նախագծային փաստաթղթերին և իր կարծիքը հայտնի դրա վերաբերյալ,

iii. հնարավորինս հստակ սահմանված լինի տարբեր սուբյեկտների /պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, նախագծողներ/ պատասխանատվությունը հասարակության մասնակցության ընթացակարգերի կազմակերպման համար,

iv. ստեղծվի բնապահպանական փորձաքննության ելրակացությունների վերաբերյալ հասարակության օպերատիվ իրավեկման համակարգ, օրինակ, Բնապահպանական նախարարության վեբ-կայքի օգնությամբ:

Համապատասխան Կողմին առաջարկում է.

ա. մինչև դրանց ընդունումը՝ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից ոչ ուշ Կոմիտեի ուսումնասիրմանը ներկայացնել անզլերեն լեզվով ՇՄԱԳ օրենքի և այլ օրենսդրական

միջոցառումների նախագծերի տեքստը այն տեսքով, որ տեսքով դրանք կգտնվեն հիշյալ ամսաթվին,

բ. Կոմիտեին ապացույցներ ներկայացնել այն մասին, որ IV/9a որոշման կատարման համար համապատասխան Կողմի առաջարկած ՇՄԱԳ օրենքը և այլ օրենսդրական միջոցառումներն ընդունվել են:

Միանում է ACCC/C/2011/62 կոմունիկացիայով Կոմիտեի այն եզրակացությանը, որ թեև Հայաստանի օրենսդրության ձևակերպումները չեն հակասում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետին, սակայն Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը, որում ասված է, որ համապատասխան բնապահպանական ՀԿ-ն չունի դատավարական իրավասուբյեկտություն, չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված նորմերին: Հետևապես, համապատասխան Կողմը չի ապահովում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի կատարումը:

Առաջարկում է համապատասխան Կողմին.

ա. վերանայել ու հստակեցնել իր օրենսդրությունը, այդ թվում՝ ՀԿ-ների մասին օրենքը և վարչական ընթացակարգերը, այն հաշվով, որպեսզի ապահովվի Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետը՝ դատավարական իրավասուբյեկտության մասով,

բ. ներպետական օրենսդրությունը Կոնվենցիայի հետ համապատասխանության բերելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դատական մարմինների իրավեկվածության բարձրացման համար “:

Օրիուսի համապատասխանության կոմիտեի կողմից 2016 թվականի 08.04.2016 թվականին ընդունված՝ “Հայաստանի կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ թիվ V/9a որոշման իրականացման առնչությամբ դիտարկումներում”, ի թիվս այլի, ասված է.

“31. Կոմիտեն համարում է, որ համապատասխան Կողմը չի կատարել V/9a որոշման պահանջները, թեև ողջունում է այսօրվա դրությամբ այդ ուղղությամբ շահագրգիռ Կողմի կատարած քայլերը.

32. Կոմիտեն առաջարկում է Կողմին, նախքան իր վերջնական վեկույցը 31.10.2016 թվականին ներկայացնելը.

ա. Թիվ V/9a որոշման 4/բ/, 5/ա/ և 7/ա/ կետերում նշված հանձնարարականների համապատասխան, արագացնել “Հասարակական կազմակերպությունների մասին” Օրենքի և Վարչական դատավարության օրենսգրքի փոփոխությունների ընդունումը և, նախքան դրանց ընդունումը, Կոմիտեին ներկայացնել դրանք անգլերեն լեզվով,

բ. Թիվ V/9a որոշման 4/գ/ (I) կետում շարադրված հանձնարարականի հետ կապված, Կոմիտեին ներկայացնել իր օրենսդրությունից համապատասխան քաղվածքներ, որպեսզի ցուցադրել, որ Կոնվենցիայի 1-ին Հավելվածում թվարկված գործունեության բոլոր

տեսակները կախված են լինելու հասարակության մասնակցության հետ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն,

գ. Թիվ V/9a որոշման 4/գ/ (II) կետում շարադրված հանձնարարականի և 21 ու 22-րդ կետերում շարադրված՝ Կոմիտեի նկատառումների հետ կապված, ապա, ուղղել բնապահպանական ՅԿ-ներին “շահագրգիռ հասարակության” ոլորտից դուրս թողնելու հետ կապված բացթողումը, ինչպես նաև ավելացնել կարծ ժամկետները, որոնց ընթացքում ՇՄԱԳ-ի ընթացակարգերով հասարակությունը պետք է ստանա նախագծային փաստաթղթերը և իր դիտարկումները ներկայացնի դրա վերաբերյալ, հանել “Հանրային ծանուցման և իրավեկման” վերաբերյալ 24-րդ կետում առկա չհիմնավորված սահմանափակումները, կապված հասարակության կողմից ցանկացած դիտարկում, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիք ներկայացնելու հետ, որոնք, ինչպես նա է համարում, վերաբերվում է նախատեսվող գործունեությանը.

33. Կոմիտեն առաջարկում է շահագրգիռ Կողմին, 31.10.2016 թվականի իր վերջնական պեկույցի հետ միասին՝

ա. ներկայացնել Կոմիտեին ապացույցներ, որ թիվ V/9a որոշման 4/բ/, 4/գ/ (I), 4/գ/ (II), 5, 7/ա/ և 7/բ/ կետերում շարադրված հանձնարարականները կատարված են,

բ. Կոմիտեին ներկայացնել թիվ V/9a որոշման կատարմանն ուղղված բոլոր օրենսդրական ակտերը անգլերեն թարգմանություններով,

գ. Կոմիտեին ներկայացնել թիվ V/9a որոշման 7/բ/ կետի համապատասխան անցկացված վերապատրաստման դասընթացների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն, օրինակ, հաճախելիության, դասախոսների, մասնակիցների հետադարձ կապի, վերապատրաստման արդյունքներով ՉԼՄ-ների հաղորդագրությունների, մասնագիտացված ՉԼՄ-ներում հոդվածների հետ կապված:

34. Կոմիտեն հիշեցնում է Կողմին, որ թիվ V/9a որոշման կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները պետք է ավարտված լինեն 31.10.2016 թվականին և այդ աշխատանքի վերաբերյալ պեկույցը լինելու է վերջին հնարավորությունը ցուցադրելու Կոմիտեին, որ Կողմը ամբողջ ծավալով համապատասխանում է որոշման պահանջներին”:

(http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/ToPartyV9a_Second_progress_review_on_V.9a_Armenia.pdf)

2. Վարչական գործ թիվ ՎԴ/343 1/05/13

Նախապատմություն

Խնդիրը կայացել է նրանում, որ՝ 31.07.2012 թվականին ՀՀ բնապահպանության նախարարությունը տվել է “Գեոթիմ” ՓԲ ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նախագծի վերաբերյալ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության” թիվ ԲՓ65 փորձաքննական եզրակացությունը, սակայն

եզրակացության տրամադրման գործընթացի փուլում, առանց որևէ հիմնավորման, հանքավայրից ընդամենը 12 կմ հեռավորության վրա գտնվող Ջերմուկ քաղաքի բնակչությունը չի ճանաչվել Ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման արդյունքում հնարավոր ազդեցության ենթակա համայնք և չի ներառվել ազդակիր համայնքների ցանկում: Դրա հետևանքով Ջերմուկի բնակչությունը զրկվել է նախատեսվող գործունեության վերաբերյալ քննարկումներին մասնակցելու և իր տեսակետը արտահայտելու հնարավորություններից: 22.03.2013 թվականին հայցվորը դիմել էր ՀՀ վարչապետին՝ Ջերմուկ քաղաքը Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ազդակիր համայնք ճանաչելու խնդրանքով: Դիմումը վերահասցեագրվել էր ՀՀ Բնապահպանության նախարարությանը: 04.04.2013 թվականին հայցվորը ստացել էր «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Գևորգյանի ստորագրությամբ մի գրություն, համաձայն որի՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ընթացքում Ջերմուկ քաղաքը ևս ազդակիր համայնք ճանաչել հնարավոր չէ:

Հայցադիմումը

Վիկտորիա Գրիգորյանի կողմից հայց էր հարուցվել ընդդեմ ՀՀ վարչապետի և ՀՀ բնապահպանության նախարարության՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքը /համայնքը/ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ազդակիր համայնք ճանաչելուն պարտավորեցնելու մասին:

Վարչական դատարանն, իր 16.05.2013 թվականի որոշմամբ, հայցադիմումի ընդունումը մերժել է՝ հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 7-րդ հոդվածներին և Սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի թիվ ՍԴՌ-906 որոշմանը: Ըստ Վարչական դատարանի՝ «անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն, վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները ... վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը /ֆիզիկական կամ իրավաբանական/, որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ»: Հիմնվելով այս դատողությունների վրա, Վարչական դատարանը համարել է, որ հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից, ինչից ելնելով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է:

Որոշումը հայցվորի կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որն իր 27.06.2013 թվականի որոշմամբ բողոքը մերժել է: Այնուհետև հայցվորը ներկայացրել է

վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 21.08.2013 թվականի որոշմամբ վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ բողոքում բերված պատճառաբանությունները բավարար չեն եզրակացնելու, որ առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտում⁵:

3. Վարչական գործ թիվ ՎԴ/1726/05/15

Վարչական դատարանը, քննության առնելով վարչական գործն ըստ հայցի՝ Սուսաննա Հայկի Շախկյանի և «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ հայցվորների 15.04.2015 թվականի դիմումում մատնանշված փաստերի առթիվ ստուգումներ իրականացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, իր 25.08.2015 թվականի որոշմամբ գործի վարույթը կարճել է:

Հայցադիմումը

Գործի հանգամանքները հետևյալն են. Հայցվոր Սուսաննա Շախկյանը հանդիսանում է Լոռու մարզի Թեղուտ հանքավայրից 6 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շնող գյուղի բնակիչ: Շնող գյուղը ճանաչված է ազդակիր համայնք և Ս.Շուխկյանը պնդել է, որ Օրհուսի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի իմաստով հանդիսանում է “շահագրգիռ հասարակության” անդամ: «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակներում առկա է շրջակա միջավայրի պահպանությունը, ուստի այդ կազմակերպությունը ևս համարում է, որ ընկնում է “շահագրգիռ հասարակություն” սահմանման տակ: 15.04.2015 թվականին հայցվորները դիմած են եղել ՀՀ բնապահպանության նախարարությանը, խնդրելով ստուգումներ իրականացնել Թեղուտի հանքավայրում, պատճառաբանելով, որ Թեղուտի հանքավայրը ներկայում շահագործվում է նոր նախագծի շրջանակներում, որի համար օրենքով սահմանված կարգով չի իրականացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, այդ գործունեությունը չի ներկայացվել հանրային քննարկման և չի ստացել դրական փորձաքննական եզրակացություն: Պատասխանի համար սահմանված ժամկետում նախարարությունը չէր կատարել հայցվորների ակնկալված գործողությունը, ինչը հայցվորների գնահատմամբ հանդիսանում է “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի, “Բնապահպանական վերահսկողության մասին” ՀՀ օրենքի 6, 13, 25 և 37-րդ հոդվածների խախտում:

Առաջին ատյանի դատարանի որոշումը

Գործի քննության ընթացքում պարզվել է, որ 12.06.2015 թվականին ՀՀ բնապահպանության նախարարը տվել է թիվ 000115 հանձնարարագիրը՝

⁵ Այնուհանդերձ, 2016 թվականի մայիս ամսին Ձերմուկ համայնքը ներառվել է որպես Ամուլսարի ծրագրի ազդակիր համայնք, երբ <<Լիդիան Ինթերնեյշնլ>> ընկերությունը ներկայացրել է Ամուլսարի ծրագրի <<Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում>> /ԲՄԱԳ/ փաստաթուղթը:

բնապահպանական պետական տեսուչի կողմից Թեղուտի հանքավայրի ստուգումն իրականացնելու համար: Ըստ այդ հանձնարարագրի՝ ԲՊ տեսչության պետի տեղակալին և Լոռու ՏԲ-ի երեք տեսուչների հանձնարարվել է 2015 թվականի հունիսի 24-ից մինչև օգոստոսի 04-ը ստուգումներ իրականացնել “Թեղուտ” ՓԲԸ-ում: Դատարանում ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ ստուգումներն, այնուամենայնիվ, չեն իրականացվել, քանի որ ՀՀ կառավարության 30.07.2015 թվականի թիվ 839-Ա որոշմամբ 2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ստուգումները կասեցվել են: Վարչական դատարանի 25.02.2015 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով, այսինքն՝ Վարչական դատարանը համարել է, որ վեճն ըստ էության սպառվել է:

Վերաքննիչ բողոքը

Հայցվոր կողմը Վարչական դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել, պատճառաբանելով, որ հայցի առարկան է եղել՝ ստուգումներ իրականացնելուն պարտավորեցնելը, այսինքն՝ վեճը կարելի կլիներ սպառված համարել միայն այն դեպքում, երբ ստուգումներն իրականացված լինեին, մինչդեռ տվյալ դեպքում ստուգումները նշանակվել են, բայց չեն իրականացվել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն, իր 23.02.2016 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է: Հայցվորները ներկայացրել են նաև վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 08.06.2016 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ բողոքում ներկայացված հիմնավորումը բավարար չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով բողոքը քննության ընդունելու հետևության հանգեցնող համար: Մինչև օրս ՀՀ բնապահպանության նախարարի թիվ 000115 հանձնարարագրով նախատեսված ստուգումները չեն անցկացվել:

4. Թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործ6

Հայցադիմումը

Թեհմինե Ենոքյանը և մի խումբ այլ քաղաքացիներ /ընդհանուր թվով՝ 11 հոգի/, ինչպես նաև «Էկոլոգիական իրավունք» և «Էկոդար» հասարակական կազմակերպությունները դիմել են ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի “Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով”-ի, պահանջելով՝

“1. ՀՀ ԳԱԱ “Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի” 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում “Գեոթիմ” ՓԲԸ-ի կողմից մշակված՝ “ՀՀ

⁶ Գործը մի մասով ներկայում գտնվում է քննության ընթացքում:

Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի նախագծին” դրական ելույթները տալը ճանաչել ոչ իրավաչափ.

2. Ճանաչել անվավեր ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության” թիվ ԲՓ-76 փորձագիտական ելույթները.

3. Որպես հետևանք՝ ճանաչել անվավեր ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի [թվարկվում են մի շարք վարչական ակտեր] “:

Առաջին ատյանի դատարանի որոշումը

ՀՀ վարչական դատարանի դատավորի 09.04.2015 թվականի որոշմամբ՝ առաջին երկու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է: Վարչական դատարանի պատճառաբանությունները հանգում են նրա, որ՝ ՀՀ ԳԱԱ “Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի” կարծիքը և “Շրջակա միջավայրի վրա ազդեցության” թիվ ԲՓ-76 փորձագիտական եզրակացությունը “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են փորձագետի եզրակացություն, որն էլ իր հերթին՝ նույն օրենքի 42-րդ հոդվածի հիման վրա, համարվում է վարչական վարույթի ապացույց: Հիմնվելով այս դրույթի վրա, Վարչական դատարանը եզրակացրել է, որ այդ մասով հայցը ենթակա չէ դատարանում քննության և, կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այդ պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժել է:

Վերաքննիչ բողոքը

Որոշումը հայցվորների կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Ըստ հայցվորների՝ դատարանը պետք է գնահատեր ոչ թե փաստաթղթի անվանումը, այլ՝ դրա բովանդակությունն ու դրա իրավական հետևանքները: Մասնավորապես, հայցվորները հղում են կատարել “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի վրա, ինչպես նաև՝ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի վրա: Հայցվորները հիշեցրել են նաև, որ՝ ՎԴ/3275/05/09 վարչական գործով նույնպես վիճարկվելիս է եղել բնապահպանական փորձաքննության եզրակացությունը և դատարանները չեն համարել, որ այդ հարցը դատարանների քննությանը ենթակա չէ: Այնուհանդերձ, Վարչական վերաքննիչ դատարանի 12.06.2015 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:

Վարչական վերաքննիչ դատարանի որոշումը հայցվորների կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի 22.07.2015 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ բողոքում ներկայացված հիմնավորումը բավարար չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով բողոքը քննության ընդունելու հետևության հանգելու համար⁷:

Ներկայում թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործը քննվում է Վարչական դատարանում, սակայն միայն այն մասով, որը վերաբերվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման վերաբերյալ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից ընդունված մի շարք վարչական ակտերի վիճարկմանը: Առաջին արկու պահանջներով հայցադիմումի ընդունումը մերժվելուց հետո հայցվորները ստիպված են եղել փոփոխելու նաև երրորդ պահանջը, որը սկզբնապես ներկայացված էր որպես առաջին արկու պահանջներից ածանցվող պահանջ: Ներկայում հայցվորները պահանջում են՝

«Ճանաչել անվավեր ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարների 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, վերջինիս կողմից 12.11.2014 թվականին տրված՝ 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված՝ 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, “Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին” ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև՝ 29.11.2014 թվականին Նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը»:

Մարդու առողջության պաշտպանություն և վնաս

1. 2003 թվականի հոկտեմբերի 25-ին Երևանի Արաբկիր համայնքում տեղի ունեցած վթարի հետևանքով որոշ ժամանակ ջրամատակարարող խողովակի ջրերին են խառնված եղել կոյուղաջրեր: Արդյունքում, այդ համայնքի բնակիչներից ոմանք տեղափոխվել էին հիվանդանոց, իսկ համայնքը մի քանի օր մնացել էր առանց խմելու ջրի: Արդյունքում, համայնքի մոտ 1600 քաղաքացի հայցերով դիմել էին դատարան, պահանջելով հատուցել իրենց կրած նյութական վնասները /բարոյական վնասի հատուցում օրենսդրությունն այդ ժամանակ առհասարակ չէր նախատեսում⁸:/

Առաջին երեք գործերով դատարանը վճռել էր յուրաքանչյուր տուժողի օգտին բռնագանձել 359-ական դրամ: Չորրորդ գործով, որը գտնվում էր մեկ այլ դատավորի վարույթում, վճռվել էր բռնագանձել 8.700 դրամ: Հինգերորդ գործով Նույն դատարանի

⁷ Ներկայում այդ մասով հաղորդում է ներկայացված Օրհուսի համապատասխանության կոմիտե: Հաղորդագրությունը ճանաչվել է ընդունելի և Կառավարությանը առաջարկվել է իր նկատառումները ներկայացնել Կոմիտե:

⁸ Այսպիսի խախտման համար ներկայումս Նույնպես բարոյական վնասի դրամական փոխհատուցում նախատեսված չէ: Այդ մասին կասվի մանրամասն օրենսդրության վերլուծությանը նվիրված բաժնում:

մեկ ուրիշ դատավոր վճռել էր բռնագանձել 14.000 ական դրամ: Քաղաքացիների փաստաբանը /տիկին Մելանիա Առուստամյան/ իր հաշվարկի համար հիմք էր վերցրել այն փաստը, որ՝ չունենալով խմելու ջուր, բնակիչները փոխարենը ջուր են ձեռք բերել խանութներից: Բազմապատկելով յուրաքանչյուր բնակչին օրական անհրաժեշտ ջրի արժեքը վթարի օրերին, փաստաբանը ստացել էր պահանջվող գումարի մեծությունը: Մինչդեռ ջրամատակարարման համար պատասխանատու ընկերությունը առաջարկել էր հաշվարկել, թե քանի խորանարդ մետր ջուր է օրական ծախսվում յուրաքանչյուր բնակչի հաշվարկով և հիմք ընդունել մեկ խորանարդ մետր ջրի մատակարարման արժեքը:

Հետագայում բոլոր գործերը բողոքարկվեցին վերաքննիչ դատարան, որը վերացրեց մոտեցումների անհավասարությունը և վճռեց գանձել յուրաքանչյուր բնակչի հաշվարկով շուրջ 450 ՀՀ դրամ⁹: Այդ պատճառով շատ բնակիչներ հրաժարվեցին իրենց հայցերից:

2. Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0799/02/10

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Քաջիկ Չավենի Մարգարյանի, Աննա Նապոլեոնի Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Վարսենիկ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Մարսելա Արտեմի Հակոբյանի, Արթուր Բորիկի Ղազարյանի, Լարիսա Արտեմի Հակոբյանի, Արշավիր Սերժիկի Խալափյանի, Ալին Ստեփանի Ղոնյանի, Լիզա Պյոտրի Հարությունյանի, Հայրապետ Արտուշի Թևանյանի, Արթուր Հայրապետի Թևանյանի, Բորիկ Բագրատի Ղազարյանի, Աշոտ Միշայի Բալայանի, Արամայիս Արտեմի Հակոբյանի, Արմեն Ռազմիկի Խաչատրյանի, Ռուզաննա Ռաֆայելի Ղազարյանի, Մերի Բաբկենի Ավետիսյանի, Լուսինե Հրանտի Գրիգորյանի, Տիգրան Այոշայի Գրիգորյանի, Վահագն Տիգրանի Գրիգորյանի և Գոհարիկ Արտեմի Միրզոյանի ընդդեմ “Հայջրմուղկոյուղի” փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագրային պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուն և մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, իր 24.03.2011 թվականի վճռով հայցը բավարարել է:

Դատարանը վճռել է՝ պատասխանող “Հայջրմուղկոյուղի” փակ բաժնետիրական ընկերությանը պարտավորեցնել կատարելու բաժանորդների հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, այն է՝ ապահովել կենցաղային կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը, ինչպես նաև՝ պարտավորեցնել “Հայջրմուղկոյուղի” փակ բաժնետիրական ընկերությանը վերացնելու մարդկանց

⁹ Այս ժամանակվա գործերը դատական համակարգի տեղեկատվական կայք-էջում չկան, ուստի տեղեկությունները վերցված են ՉԼՄ-ների հրապարակումներից և հայցվորների ներկայացուցիչ Մ.Առուստամյանից:

առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

Վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ, այնուհետև ՀՀ վճռաբեկ դատարան, սակայն մնացել է անփոփոխ և մտել է օրինական ուժի մեջ /ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2011 թվականի որոշում, ՀՀ վճռաբեկ դատարանի 11.04.2012 թվականի որոշում/:

Գործի ելությունը կայանում է նրանում, որ հայցվորները, ովքեր “Հայջրմուղկոյուղի” փակ բաժնետիրական ընկերության հետ ունեցել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, պնդել են, որ Ընկերությունը կենցաղային կեղտաջրերը համապատասխան խողովակաշարով հեռացնելու, այն մաքրման կայան հասցնելու ու մաքրելու փոխարեն բաժանորդից ընդունված և հեռացված կոյուղու կեղտաջրերը կենտրոնական համակարգից անմիջապես լցնում է Կապան քաղաքի Ողջի գետը՝ քաղաքի ամբողջ երկայնքով, որի հետևանքով բնապահպանական լուրջ հիմնախնդիր է առաջացել, այն է՝ հատկապես ամառային տաք օրերին Ողջի գետից տիպիկ հոտ է գալիս, Ողջի գետից տեղական բնակչությունը ձկնորսություն է անում, Ողջի գետի թունավորված ջրերով ջրվում են Կապան քաղաքի վարչական տարածքում գտնվող ափամերձ հողամասերը, Ողջի գետի հոսանքով գտնվող Սյունիք գյուղի այգիներն ու բանջարանոցները, իսկ նշված հողամասերից ստացված բերքը օգտագործում է ազգաբնակչությունը: Տվյալ փաստերի վրա ուշադրություն հրավիրելու համար հայցվորները դիմել էին պատասխանող Ընկերությանը և ՀՀ բնապահպանության նախարարությանը, որոնք իրենց պատասխաններով /համապատասխանաբար 27.07.2009, 12.01.2010 թվականների գրությունները/ ընդունել են, որ Կապան քաղաքում փաստացի չի գործում կոյուղաջրերի հեռացման և մաքրման համակարգը:

Դատարանը հաստատված է համարել վերը թվարկված հանգամանքները և հայցը բավարարել է: Սակայն այդ վճիռն այդպես էլ չի կատարվել, ինչի մասին է վկայում թիվ ՎԴ/4221/05/11 վարչական գործի ընթացքը, որը նույնպես բերված է սույն վերլուծության մեջ:

3. Վարչական գործ թիվ ՎԴ/4221/01/11

Վարչական դատարանը, քննության առնելով թիվ ՎԴ/4221/01/11 վարչական գործն ըստ հայցի Արթուր Ղազարյանի, Արշավիր Խալափյանի, Տիգրան Գրիգորյանի Արմեն Խաչատրյանի, Արթուր Թևանյանի ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, երրորդ անձ “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի՝ “ՀՀ Բնապահպանության նախարարությանը ՀՀ օրենսդրությանը համապատասխան ջրի և կեղտաջրերի հեռացումը և մաքրումը ապահովելուն պարտավորեցնելու” պահանջի մասին, իր 01.08.2012 թվականի վճռով հայցը մերժել է:

Գործի հանգամանքները կայանում են հետևյալում. Հայցվորները հայտնել էին, որ Սյունիքի մարզի Կապան քաղաքի կեղտաջրերի հեռացումն իրականացվում է խողովակների միջոցով, որը ձգվում է քաղաքի ամբողջ երկայնքով՝ Ողջի գետի աջ ափով և ավարտվում է Սյունիքի մարզի Սյունիք գյուղին հարակից մաքրման կայանում, որը չի գործում: Տվյալ համակարգը ստեղծվել է դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին: Տարիների ընթացքում կեղտաջրերի հեռացման խողովակների անհետևողական շահագործման արդյունքում դրանք քայքայվել և շարքից դուրս են եկել, որոշ տեղերում խցանվել, գտնվում են վթարային վիճակում, կեղտաջրերն առանց մաքրման թափվում են Ողջի գետը: Նույն գետի մեջ են թափվում նաև քաղաքին հարակից խոշոր հանքարդյունաբերական ընկերությունների արտադրական կեղտաջրերը և արդյունաբերական ջրերը: Դատարանը հաստատված է համարել այդ բոլոր փաստերը: Բացի այդ, դատարանը նաև հաստատված է համարել, որ խողովակի գրանցված է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հաշվեկշռում և վերջինս հանդիսանում է ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման պատասխանատու կազմակերպությունը: Հայցվորները՝ «Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության զարգացման» ՀԿ-ի միջոցով դիմել են ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ պարզելու համար, թե ինչ քայլեր են ձեռնարկվում՝ Ողջի գետի վրա վնասակար ներգործության կանխարգելման և նվազեցման ուղղությամբ: 2010 թվականի հունվարի 12-ին և 2011 թվականի հուլիսի 28-ին ստացել են պատասխաններ՝ ձեռնարկվող և ապագայում ձեռնարկվելիք գործողությունների մասին: Ըստ այդ պատասխանների. Հիմնախնդիրը գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում, իրավիճակը վերահսկվում է նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից, պարբերաբար ստուգվում է Կապանի կոյուղու ցանցի տեխնիկական վիճակը: Հայջրմուղկոյուղու Կապանի տեղամասին տրվում են հանձնարարականներ, միաժամանակ վերահսկվում են դրանց կատարման արդյունքները, վերցվում է Ողջի գետի ջրերի նմուշներ և ենթարկվում անալիտիկ վերլուծության: Փորձանմուշներում վտանգավոր և թունավոր նյութերով ջրերի աղտոտումների հետևանքով շրջակա միջավայրին և կենդանական աշխարհին վնասների պատճառման դեպքեր չեն արձանագրվել: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից վերականգնվել են Ա. Մանուկյան և Յ. Ավետիսյան փողոցների կոյուղու կոլեկտորները, քաղաքի առանձին հատվածներում վերականգնվել են դիտահորերը, վերացվել են ծառերի արմատներից առաջացած խցանումները: Արդյունքում հաջողվել է չմաքած կեղտաջրերի բաց ջրավազան արտահոսման կետերի քանակը կրճատել: Որոշակի օբյեկտիվ հանգամանքների, առաջին հերթին՝ ջրօգտագործման ծավալների զգալի կրճատման և խնայողության, հաշվիչների տեղադրման հետևանքով, քաղաքի տարածքում չմաքված կեղտաջրերի արտահոսքերի ծավալներն էականորեն կրճատվել են և հասցվել հնարավոր նվազագույնի:

Հայցը մերժելու պատճառաբանությունը, հակիրճ, կայանում է հետևյալում.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ

վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել”: Տվյալ դեպքում վարչական դատարանը եզրակացրել է, որ հայցվոր կողմը պատասխանողից չի ակնկալել որևէ կոնկրետ գործողություն, իսկ պատասխանող կողմը չի դրսևորել անգործություն: Դատարանը նկատի է ունեցել, որ՝ հայցվորները գրություն են ուղարկած եղել պատասխանողներին, պահանջելով մի շարք հարցերի պատասխաններ, իսկ պատասխանողն, իր 2011 թվականի հուլիսի 28-ի գրությամբ տվել է նշված հարցերի պատասխանները: Մասնավորապես, նկարագրել է, թե ինչ աշխատանքներ են տարվել ու տարվում իրավիճակը բարելավելու համար:

Դատարանը համարել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից անգործություն չի դրսևորվել: Դատարանն այս առումով գնահատել է ոչ թե ՀՀ բնապահպանության նախարարության աշխատանքների բավարար լինել կամ չլինելու հարցը, այլ՝ հայցվորների նամակին պատասխան տրամադրելու հանգամանքը:

Այս գործով հատկանշական է “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի դիրքորոշումը: Այս ընկերությունն, ի թիվս այլի, դատարանում հայտնել է, որ ընդհանրապես հանրապետության ողջ տարածքում կոյուղաջրերի մաքրում չի իրականացվում մաքրման կայանների բացակայության պատճառով, բացառությամբ Երևան քաղաքի, որտեղ սակայն Աերացիայի պես հզոր գործարանի առկայության պայմաններում կոյուղաջրերի մաքրումը պատշաճ ձևով չի կատարվում սարքավորումների մաշվածության պատճառով: Հանրապետությունում կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցման պարտականությունը կրում է ջրային համակարգերի սեփականատերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որոնց կառուցման համար կպահանջվի հսկայական ֆինանսական միջոցներ և ժամանակ, իսկ “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ իրականացնում է կառավարման պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ջրային համակարգերի հետագա ֆայթայումից պահպանումը, շահագործումը և հնարավոր փոքրածավալ վարկային ներդրումների հաշվին խմելու ջրի մատակարարման ծառայությունների մատուցման բարելավումը: Հասկանալի և ընդունելի է հայցվորների պահանջների օրինաչափությունը, սակայն հայցվորների պահանջները ներկայումս անիրագործելի է վերոհիշյալ պատճառներով: “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ ներկայացուցիչը նաև հայտնել է, որ Կապան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում գործող խողովակաշարերի ընդհանուր երկարության շուրջ 70%-ը կառուցվել է 40 և ավելի տարիներ առաջ ու անցել են դրանց շահագործման նորմատիվային ժամկետները, քաղաքի ջրահեռացման համակարգը գտնվում է անբավարար վիճակում, սակայն ստեղծված իրավիճակում կեղտաջրերի մաքրում հնարավոր չի կատարել: Հայցվորների կողմից բարձրացված հարցը նոր չէ, այն բազմիցս քննարկվել է ՀՀ կառավարությունում՝ «տարածքային կառավարման նախարարությունում, նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում, բնապահպանության նախարարությունում, “Հայջրմուղկոյուղի” ՓԲ ընկերությունում և տրվել են համապատասխան պատասխաններ:

4. Թիվ ԵԿԴ/1543/02/11 քաղաքացիական գործ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով քաղաքացիական գործ ըստ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ համայնքի հայցի ընդդեմ ՏՅայջըմուղկոյուղի, Ծ'Ա-ի, մասնակցությամբ երրորդ անձ ՅՅ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Շիրակի մարզային կենտրոնի՝ պարտականությունները կատարելուն հարկադրելու մասին, իր 20.11.2012 թվականի վճռով հայցը մերժել է:

Գործի Էությունը կայացել է հետևյալում. հայցվորը պնդել է, որ Փոքր Մանթաշ համայնքի ջրատար խողովակաշարերը քայքայվել են և ենթակա են փոխարինման նորով, գյուղական քլորակայանը գտնվում է վթարային վիճակում և ջուրը չի վարակապերծվում, ջրին տրվող քլորի խողովակները նույնպես քայքայված են, վարակապերծման սարքավորումների հնամաշ լինելու պատճառով դրանք շահագործման համար պիտանի չեն: Բացի այդ, ջրամբարից եկող ջուրը մինչև ներքին ցանց մտնելը լցվում է համայնքի տարածքում գտնվող ՕԿԶ-ն, որը չունի սան պահպանման գոտի: Վերանորոգման աշխատանքներ չիրականացնելու հետևանքով ՕԿԶ-ի ամբարի հերմետիկությունը խախտվել է՝ առաստաղը և պատերը քանդվել են, գտնվում են վթարային վիճակում և կան ջրի արտահոսքեր: Ընդ որում, խմելու ջրատարի մի մասն անցնում է համայնքի գերեզմանատան միջով, որի վրա դեռևս 1970-2007թթ. ընթացքում իրականացվել են շուրջ 90 հողարկավորություններ: ՏՅայջըմուղկոյուղի, Ծ'Ա-ն ջրամատակարարման համակարգի ընդունումից հետո բնակչությանը խմելու ջրի մատակարարումն իրականացնում է նաև այդ խողովակաշարով: Հայցվորը խնդրել էր՝ Հարկադրել ՏՅայջըմուղկոյուղի, Ծ' ընկերությանը սույն գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռնամուխ լինել ողջամիտ ժամկետում կատարելու 20.04.1999թ. գույքի անհատույց օգտագործման պայմանագրից բխող պարտավորությունները, այն է՝ շահագործման համար քայքայված և ոչ պիտանի խողովակաշարերը փոխարինել նորով, հիմնովին վերանորոգել գյուղական քլորակայանը, ջրին տրվող քլորի խողովակները և վարակապերծման սարքավորումները փոխարինել նորով, հիմնովին վերանորոգել համայնքի տարածքում գտնվող ՕԿԶ-ն և դրա համար ստեղծել սան պահպանման գոտի:

Դատարանը հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ՝ ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48, 49 հոդվածների համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Հայցվորը հայցապահանջի հիմքում դրել է այն հանգամանքը, որ պատասխանող «ՏՅայջըմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից խախտվել են 20.04.1999թ. կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի 4-րդ կետի «ա» ենթակետի, «բ» ենթակետը և «դ» ենթակետը: Հայցվորը ներկայացրել է միայն 20.04.1999թ. կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի դժվար ընթեռնելի պատճենը, այդպես էլ չներկայացնելով նշված պայմանագրի բնօրինակը, որի հետազոտումից հևարավոր կլիներ պարզել, թե պայմանագրի գործողության ժամկետը,

թե կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որն էլ իր հերթին հնարավորություն կտար պարզելու ներկայումս պարտավորությունների առկայության և դրանց կատարման պատշաճությունը:

Սեփականության վեճեր

Ստորև բերված 10 գործերը առանձնանում են նրանով, որ դրանցից յուրաքանչյուրով պատասխանող կողմը, սպառելով ներպետական պաշտպանության միջոցները, դիմել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան /ՄԻԵԴ/: Գործերը ներկայացվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով /Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք/ և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով /Սեփականության պաշտպանություն/: Գործերը հետևյալն են.

1. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ Սիեր Լեոնի Ալիխանյանի թիվ L7/1352/02/08 քաղաքացիական գործը,
2. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ Լևոն Աշոտի Ալիխանյանի թիվ L7/1239/02/08 քաղաքացիական գործը,
3. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1. Լևոն Աշոտի Ալիխանյան, 2. Ռիմա Արտավազի Մելիքսեթյան, 3.Արծրուն Լևոնի Ալիխանյան, 4. Աշոտ Լևոնի Ալիխանյան թիվ L7/1336/02/08 քաղաքացիական գործ,
4. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1. Հրանտ Երվանդի Հարությունյան, 2. Թամարա Աղասու Պետրոսյան, 3.Հրաչիկ Հրանտի Հարությունյան,4. Թինա Հրանտի Հարությունյան թիվ L7/1193/02/08 քաղաքացիական գործը,
5. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1. Ռուսայել Շաքարի Մաշինյան, 2. Ժենիկ Միսակի Մաշինյան, 3.Շաքար Ռուսայելի Մաշինյան, 4. Վարազդատ Ռուսայելի Մաշինյան, 5. Լիանա Ռոբերտի Ռամազյան թիվ L7/1276/02/08 քաղաքացիական գործը,
6. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1. Վոլոդյա Մակարի Փարսադանյան, 2. Լուսինե Վոլոդյայի Փարսադանյան 3. Սեդա Նիկոլայի Փարսադանյան թիվ L7/0192/02/09 քաղաքացիական գործը,
7. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1. Ժորա Լևոնի Ռամազյան, 2. Արկադի Ժորայի Ռամազյան թիվ L7/0593/02/09 քաղաքացիական գործը,
8. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ 1.Վարդան Յուրիկի Վարդանյան, 2.Մարինե Հախվերդյան, 3.Վահե Վարդանյան 4.Արմինե Վարդանյան, 5.Անի Վարդանյան թիվ L72/0239/02/08 քաղաքացիական գործը : (վերը նշված թվով 8 գործերով ՄԻԵԴ-ում կոմունիկացիան ավարտված է, սպասվում են վճիռներ)
9. “Թեղուտ” ՓԲԸ-ն ընդդեմ Նվեր Սերյոժայի Հոբոսյան թիվ L72/0239/02/08 քաղաքացիական գործը,

10. «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդդեմ Սպարտակ Բոշյանի թիվ LԴ/1250/02/08 քաղաքացիական գործը: (վերը նշված երկու գործը ՄԻԵԴ են ներկայացվել մնացածներից ավելի ուշ: Դրանցով ներկայացված գանգատները դեռևս չի կոմունիկացվել Կառավարությանը)

Աշխատանքային վեճեր.

Ստորև նկարագրված գործերը վերաբերում են հարցերի լայն շրջանակի, այդ թվում՝ աշխատակցի մահվանը հաջորդող ֆինանսական հայցեր, աշխատակիցների աշխատանքից հեռացմանը վերաբերող հայցեր, ինչպես նաև ծառայության տևողության ճշգրիտ գրանցմանը վերաբերող հայցեր:

1. Գործ թիվ ԿԴ 0335/02/10

Գործի հանգամանքները կայանում են հետևյալում. Հայցվորներից Անահիտ Մինասյանը հանդիսանում է պատասխանող՝ «Էյ Սի Փի» ՓԲ ընկերության նախկին աշխատակից Մանուկ Սուրենի Մինասյանի օրինական կինը: 2008 թվականի հոկտեմբերի 30-ին Ալավերդու հանքում արտադրական պատահարի հետևանքով Մանուկ Մինասյանը մահացել է: Արտադրական վտանգավոր օբյեկտում տեղի ունեցած մահացու ելքով արտադրական դժբախտ պատահարի դեպքի պատճառների տեխնիկական քննության իրականացնող հանձնաժողովը եզրակացրել է, որ դժբախտ դեպքի պատճառ է հանդիսացել մեխանիկական ազդեցության ներքո լեռնաերկրաբանական կառուցվածքի խախտումը, որի արդյունքում դատարկ ապարների և հանքային մարմնի կոնտակտում տեղի է ունեցել շերտազատում: Պահանջել է, որպեսզի իրեն վճարվի կերակրողին կորցնելու կապակցության փոխհատուցման գումար՝ ամսական 122.000 ՀՀ դրամի չափով: Մյուս հայցվորը՝ Արտյոմ Մինասյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 780.000 ՀՀ դրամ՝ գերեզմանաքարի և տեղադրման ծախսերի և 500.000 ՀՀ դրամ՝ հուղարկավորության արարողություններին կատարված ծախսերի փոխհատուցում:

Հուղարկավորման հետ կապված ծախսերի հետ կապված պահանջը մասամբ մերժելու պատճառաբանությունը կայացել է նրանում, որ հայցվորները չեն կարողացել ապացուցել համապատասխան ծախսերը, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիման վրա, վնասի չափի ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը:

Իսկ ինչ վերաբերվում է կերակրողին կորցնելու կապակցության փոխհատուցման գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջին, ապա դատարանը գտել է, որ «մահացածի ինսամքի ներքո գտնելը և անաշխատունակ լինելու հանգամանքը հաստատվում է դատական կարգով կայացված դատական ակտով, իսկ համայնքի ղեկավարի տեղեկանքը՝ ինսամքի տակ գտնվելու մասին սույն դեպքին վերաբերող

ապացույց դիտվել չի կարող: Հետևաբար հիշյալ պատճառաբանություններով Անահիտ Մինասյանի պահանջը ենթակա է մերժման»:

2. Գործ թիվ LԴ2/0062/02/11

Գործի հանգամանքները համառոտ. հայցվոր Մանյա Անդրեասյանը աշխատել էր պատասխանող «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ում որպես ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ: Ընկերության տնօրինությունը ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 122 հոդվածի 1-ին կետով Ս. Անդրեասյանին ազատել էր աշխատանքից այն բանի համար, որ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում դրամական արժեքներ սպասարկելիս ընկերությանը պատճառվել է նյութական վնաս:

Հայցվորը պահանջել էր իրեն վերականգնել նախկին աշխատանքում, պնդելով, որ ոճ աշխատանքից ազատելու հրամանի, ոչ էլ մեկ այլ փաստաթղթի մեջ նշված չէ, թե ինչ վնաս է պատճառվել նա ընկերությանը, պատճառված վնասը իր ինչպիսի սխալ գործողությունների հետևանքով է կատարվել և կոնկրետ ինչու՞մն է կայանում նրա մեղքը, լինի դա դիտավորություն, թե անփութություն:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է: Դատարանը որոշել է՝ «Մանյա Երվանդի Անդրեասյանի հայցն ընդդեմ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ նախկին աշխատանքում վերականգնելու պահանջի մասին բավարարել: Պատասխանող «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի տնօրենի 01.03.2011 թ-ի N 009-Ա/Կ հրամանը ճանաչել անվավեր և Մանյա Երվանդի Անդրեասյանին վերականգնել իր նախկին աշխատանքում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ում որպես ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ»: Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

3. Գործ թիվ LԴ2/0168/02/11

Գործի հանգամանքները համառոտ. հայցվոր Մանյա Անդրեասյանը դիմելով դատարան հայտնել է, որ աշխատել է պատասխանող «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ ընկերությունում, որպես ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ: Նրա ամսեկան աշխատավարձը կազմել է 120.000 դրամ: Ընկերության տնօրինությունը 01.03.2011 թվականի թիվ՝ N 009 Ա/Կ հրամանի հիման վրա նրան ազատել է աշխատանքից: ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2011 թվականի հունիսի 6-ի վճռով բավարարել է նրա նախկին աշխատանքում վերականգնելու հայցը և անվավեր է ճանաչել ընկերության տնօրենի 01.03.2011 թվականի N 009-Ա/Կ աշխատանքից ազատման հրամանը¹⁰:

¹⁰ Տես՝ նախկին կետում նկարագրված գործը:

Պատասխանող ընկերության 09.07.2011 թվականի թիվ՝ N 037-Ա/Կ հրամանով նա վերականգնվել է իր նախկին աշխատանքում և սկսել է հաճախել աշխատանքի, սակայն պատասխանող ընկերությունը նրան չի վճարել հարկադիր պարապուրդի աշխատավարձի գումարը: Նրան աշխատանքում վերականգնելու հրամանից մեկ ամիս հետո տնօրինությունը ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասով և 194-րդ հոդվածով, 2011 թվականի հուլիսի 11-ի թիվ N004S հրամանով նրա համար սահմանել է աշխատանքի վարձատրության նոր պայման՝ աշխատավարձի նոր դրույթաչափը սահմանելով 32.500 դրամ:

Հայցվորը հիմնվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265 հոդվածի վրա, որի համաձայն՝ եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին՝ գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը, այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով: Քանի որ միջին օրական աշխատավարձը կազմել է 9488 դրամ, որն էլ բազմապատկելով աշխատանքից ազատման օրվա՝ այսինքն 01.03.2011 թվականից մինչև 11.07.2011 թվականը ընկած ժամանակահատվածի օրերով / որը կազմում է ` 95 օր /, կազմում է 826.896 դրամ: Հայցվորը խնդրել է այդ գումարը բռնագանձել “Արմենիան Քափր Փորոգրամ” ՓԲԸ-ից:

“Արմենիան Քափր Փորոգրամ” ՓԲԸ-ն իր հերթին հակընդդեմ հայց է հարուցել ընդդեմ Մանյա Անդերասյանի՝ խնդրելով վերջինից հօգուտ իրեն բռնագանձել 446.195 ՀՀ դրամ՝ որպես նրա կողմից կատարված սխալների, կեղծիքների և այլ դիտավորյալ գործողությունների արդյունքում ընկերությանից ավել ստացված գումարների հատուցում, իսկ մնացած 561.053 ՀՀ դրամը հաշվանցել ընկերության կողմից Մ.Անդրեասյանին վճարվելիք գումարի հետ: Ընկերությունը պատճառաբանել է, որ Մանյա Երվանդի Անդրեասյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում իրեն հավելագրելու և որոշակի հարկային պարտավորություններ չկատարելու հետևանքով ընկերությանը պատճառել է վնաս, որը ընդհանուր կազմում է 1,322,825 ՀՀ դրամ: Ի հիմնավորումս այդ հանգամանքի, ընկերությունը ներկայացրել էր թիվ 12-1915 դատա-հաշվապահական փորձաքննության եզրակացությունը, ընկերության հաշվապահական հաշվառման բաժնի աշխատակից Մանյա Երվանդի Անդրեասյանի աշխատավարձի հաշվարկման և վճարման փաստաթղթերի վերստուգման արդյունքների վերաբերյալ 03.10.2011 թվականի թիվ 1 ակտը, 2008-2009 և 2010 թվականների “Արմենիան

Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության աշխատակիցների հաճախելիության հաշվառման մատյանի հավելվածը:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 23.04.2014 թվականին վճռել է. “Մանյա Երվանդի Անդրեասյանի հայցն ընդդեմ “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության՝ 862.896 դրամ հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման և պատասխանողի 2011 թվականի հուլիսի 11-ի թիվ N 0045 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի: Անվավեր ճանաչել “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության տնօրենի 11.07.2011 թվականի թիվ 004 S հրամանը: “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերությունից հոգուտ Մանյա Երվանդի Անդրեասյանի բռնագանձել 561,053 (հինգ հարյուր վաթսուն հազար հիսուներեք) ՀՀ դրամ հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար չվճարված գումար: Հայցը գումարի բռնագանձման մնացած մասով մերժել:

“Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության հակընդդեմ հայցն ընդդեմ Մանյա Անդրեասյանի՝ Մանյա Անդրեասյանից հոգուտ “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության 446.195 ՀՀ դրամ, որպես նրա կողմից կատարված սխալների, կեղծիքների և այլ դիտավորյալ գործողությունների արդյունքում ընկերությունից ավել ստացված գումարները բռնագանձելու, մնացած 561.053 ՀՀ դրամը հաշվանցելու, Մանյա Անդրեասյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի հետ կապված այլ ծախսերը նրա վրա թողնելու պահանջների մասին, բավարարել: Մանյա Անդրեասյանից հոգուտ “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության բռնագանձել 991,966 ՀՀ դրամ, որպես պատճառված վնասի գումար:

Սկզբնական հայցով “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերությունից հոգուտ Մանյա Երվանդի Անդրեասյանի բռնագանձման ենթակա 561,053 (հինգ հարյուր վաթսուն հազար հիսուներեք) ՀՀ դրամը հաշվանցել հակընդդեմ հայցով Մանյա Անդրեասյանից հոգուտ “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության բռնագանձման ենթակա 991,966 (ինը հարյուր ինստունսմեկ հազար ինը հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամից և Մանյա Անդրեասյանից հոգուտ “Արմենիան Քափըր Փրոգրամ” ՓԲ ընկերության բռնագանձել 426,006 (չորս հարյուր քսանվեց հազար վեց) ՀՀ դրամ”:

Վճիռը բողոքարկվել է հայցվորի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որի 08.07.2014 թվականի որոշմամբ բողոքը մերժվել է: Այնուհետև հայցվորը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 22.10.2014 թվականի որոշմամբ:

4. Համանման գործեր թ.թ. ՍԴ/0103/02/13, ՍԴ/0516/02/13, ՍԴ/0176/02/14, ՍԴ/0011/02/16, ՍԴ/0045/02/15 գործերը, որոնցով քաղաքացիները հայցադիմումներ են ներկայացրել ընդդեմ “Չանգեզուրի ՊՄԿ” ՓԲ ընկերության՝ աշխատանքային գրքույկում ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Նշված քաղաքացիներն իրենց հայցադիմումներում հայտնել են, որ որոշակի ժամանակաշրջանում աշխատել են Չանգեզուրի պղնձամուխթենային կոմբինատում, այնպիսի աշխատանքում, որը ապահովում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք, սակայն իրենց աշխատանքային գրքույկներում այլ աշխատանք է նշված: Գրառումն ուղղելու համար դիմել են “Չանգեզուրի ՊՄԿ” ՓԲ ընկերությանը, սակայն վերջինս իրենց պահանջը չի բավարարել:

Դատարանը, կիրառելով կողմերի միջև իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ Աշխատանքային օրենսգրքի /ընդունվել է 09.11.2004 թվականին և ուժի մեջ է մտել է 21.06.2005 թվականին/ 14 հոդվածը և 90 հոդվածները և հայցերը բոլորը բավարարել է: Վճիռների չեն բողոքարկվել ու մտել են օրինական ուժի մեջ:

Թիվ ՍԴ/0501/02/12 գործով հայցվորը նույն հիմքով դիմել էր դատարան, սակայն գործի վարույթը կարճվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Սահմանադրական դատարանի որոշումներ.

Ստորև վերլուծվել է Սահմանադրական դատարանի երկու որոշում, որոնցից մեկը վերաբերում էր Օրհուսի կոնվենցիային, իսկ մյուսը՝ Վարչական դատավարության օրենսգրքին:

1. Սահմանադրական դատարանի 26.12.2000 թվականի ՍԴՌ-269 որոշումը

Նշված գործով Սահմանադրական դատարանի քննության առարկա է եղել “Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին” կոնվենցիայում /Օրհուսի կոնվենցիա/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը: Սահմանադրական դատարանը գտել է, որ Օրհուսի կոնվենցիան համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր որոշման պատճառաբանական մասում Սահմանադրական դատարանն, ի թիվս այլի, նշել է.

“Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիայով ստանձնված [վերոհիշյալ] պարտավորություններն իրենց բնույթով բխում են ՀՀ Սահմանադրության 1, 4, 8, 10, 24, 34, 38, 39, 40 հոդվածների պահանջներից, քանի որ կոչված են ապահովելու Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետության հիմնարար սահմանադրաիրավական սկզբունքի կիրառումը, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, շրջակա միջավայրի համար սեփականության իրավունքի անվսաս իրականացումը, այդ միջավայրի պահպանությունը, վերարտադրությունը և բնական պաշարների բանական

օգտագործումը, ինչպես նաև խոսքի՝ ներառյալ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու, բնակչության առողջության պահպանման իրավունքի իրականացումը: Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները կոչված են ապահովելու նաև անձի խախտված իրավունքների, ազատությունների դատական պաշտպանության և այդ նպատակով անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը”:

2. Սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի ՍԴՌ-906 որոշումը

Այս գործով “Յելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ” ՀԿ-ի դիմումի հիման վրա վիճարկվում էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի՝ “խախտել” բառից հետո “նրա” արտահայտության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Սահմանադրական դատարանը գտավ, որ նշված նորմը համապատասխանում է Սահմանադրությանը: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ արտահայտեց ստորև ներկայացվող դիրքորոշումները, որոնք հետագայում լայնորեն օգտագործվել են ՀՀ վճռաբեկ և վարչական դատարանների կողմից՝ ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ սահմանափակումներ մտցնելիս: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է.

“ Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի («Actio popularis») առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռնվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է: Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտված նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրիուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական

նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին Է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դատական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կոլեկտիվ կամ համայնքային շահեր:

Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի actio popularis-ը պետք է բացառվի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական պարզացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ”:

Ինչպես երևաց նախորդ բաժիններում ներկայացված գործերից, ՀՀ վճռաբեկ դատարանն իր Վարչական դատարանն իր 01.04.2011 թվականի որոշման մեջ հղում է կատարել Սահմանադրական դատարանը հենց այս որոշման վրա՝ հիմնավորելու համար, որ բնապահպանական հասարակական կազմակերպություններն իրավասու չեն բնապահպանական խնդիրներով դիմելու դատարան: Սակայն, Սահմանադրական դատարանի այս որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում չկա այնպիսի դիրքորոշում, որից կբխեր նման սահմանափակումը: Ընդհակառակը, Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ իր համաձայնությունն է արտահայտում ՀՀ վճռաբեկ դատարանի ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի թիվ ՎԴ/3275/05/08 որոշման մեջ արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշման հետ. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռները.

Այս բաժնի ուշադրության կենտրոնում են հիմնականում շրջակա միջավայրի աղտոտմանն առնչվող մի շարք գործեր, որտեղ պարզվել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) սահմանված քաղաքացիների իրավունքները ոտնահարվել են: Թեև այս դեպքերը չեն վերաբերում Հայաստանին, դրանք սակայն նախադեպեր են ներկայացնում:

1. Լոփեզ Օսթրան ընդդեմ Իսպանիայի /Lopez Ostra/ գործով ՄԻԵԴ կողմից 09.12.1994 թվականին կայացված վճիռը վերաբերում էր Իսպանիայի մի քաղաքացուհու, որ պնդում էր, որ տուժում է հեղուկ և պինդ թափոնների գործարանի աշխատանքի արդյունքում, որը կառուցվել է իր տան հարևանությամբ 1988 թվականին: Նա պնդում էր, որ գործարանի շահագործման ընդունվելուց հետո դրանից եկող վնասակար գոլորշիները բերել են իր, ինչպես նաև թաղամասի այլ բնակիչների առողջական վիճակի վատթարացմանը, ինչպես նաև լուրջ անհարմարություններ են առաջացրել իրենց համար: Տեղական ինքնակառավարման մարմինները սկզբում տարհանել են այդտեղի բնակիչներին, իսկ հետո, 09.09.1988 թվականին դադարեցրել են գործարանի մի շարք արտադրամասերի աշխատանքը: Դիմողը պնդում էր, որ խախտվել են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը /Խոշտանգումների արգելում/ և 8-րդ հոդվածը /Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք/:

Եվրոպական դատարանը գտավ, որ տվյալ դեպքի համար կիրառելի է 8-րդ հոդվածը, քանի որ. **“Իհարկե, շրջակա միջավայրի ուժեղ աղտոտումը կարող է անդրադառնալ մարդկանց բարեկեցության վրա այն աստիճանի, որ ծայրահեղ վատ անդրադառնա նրանց անձնական և ընտանեկան կյանքի վրա՝ առանց լուրջ վտանգի տակ դնելու նրանց առողջությունը”:** Այլ կերպ ասած, Եվրոպական դատարանը հնարավոր համարեց շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված հարցերը դիտարկել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում: Այնուհետև, Եվրոպական դատարանն անդրադարձավ արդեն հոդվածի 2-րդ կետին, պարզելու համար, թե արդյո՞ք այն պահպանվել է իշխանությունների կողմից: Այդ կապակցությամբ ՄԻԵԴ-ն իր վճիռում նշեց, մասնավորապես, հետևյալը.

“Դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ տիկին Օսթրան և իր ընտանիքը ավելի քան երեք տարի ստիպված են եղել գործարանի շահագործման հետ կապված անհարմարություններ կրել, մինչև որ նրանց տեղափոխել են նոր տուն՝ այդ տեղափոխության հետ կապված լրացուցիչ հոգսերով ու անհարմարություններով: Ընդ որում, ընտանիքը տեղափոխվել է միայն այն ժամանակ, երբ իրեն պարզ է դարձել, որ ստեղծված իրավիճակը կարող է տևել որքան ասես երկար և երբ մանկաբույժը խորհուրս է տվել տիկին Օսթրայի դստերը փոխել բնակության վայրը: Ստեղծված իրավիճակում տեղական ինքնակառավարման մարմնի առաջարկով նոր տուն

տեղափոխվելը չէր կարող լիովին փոխհատուցել ընտանիքի կրած տհաճություններն ու անհարմարությունները: Վերը շարադրվածի հաշվառմամբ և չնայած որ նման դեպքերում պետությունն ունի հայեցողության որոշակի սահմաններ, Դատարանը գտնում է, որ պետությանը չի հաջողվել սահմանել արդարացի հավասարակշռություն քաղաքի տնտեսական շահի և դիմողի բնակարանի, անձնական ու ընտանեկան իրավունքների պատշաճ պահպանման միջև”:

Արդյունքում, Եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում և, դրա հետ միասին, պետության համար սահմանել դիմողի բարոյական ու նյութական վնասի հատուցման պարտականություն:

Միաժամանակ, Եվրոպական դատարանը գտել է, որ առկա չէ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

2. Ջաքոմեյին ընդդեմ Իտալիայի /Giacomelli/ գործով ՄԻԵԴ կողմից 12.10.2006 թվականին կայացված վճիռը վերաբերում էր Իտալիայի մի քաղաքացուհու, ով պնդում էր, որ պետության կողմից խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իր իրավունքը: Նա ներկայացրել էր, որ իր տանից 30 մետր հեռավորության վրա կար վտանգավոր և ոչ վտանգավոր հատուկ թափոնների պահման և վերամշակման գործարան: Գործարանը 1982 թվականին Լոմբարդիա տարածաշրջանի խորհրդի կողմից ստացել է համապատասխան լիցենզիա 5 տարի ժամկետով և ակսել է աշխատել, որից որոշ ժամանակ անց գործարանին թույլատրվել է զգալիորեն ավելացնել վերամշակվող թափոնների քանակը: Գործարանի աշխատանքային գործընթացն իր մեջ ներառում էր վտանգավոր թափոնների դետոքսիկացում, որի ընթացքում հատուկ լաբորատորիաներում թափոնները վերամշակվում էին քիմիկատների միջոցով: 21.09.1993 թվականին տեղի առողջապահության մարմինները հայտնաբերել են, որ գործարանից արտանետվող ծխի մեջ մի շարք նյութերի պարունակությունը գերազանցում է թույլատրելի չափերը, 08.03.1995 թվականին գործարանում հայտնաբերվել է սպիտակ փոշու նստվածք, տոքսիկ նյութերի համար նախատեսված մի քանի տարողություններ գտնվել են գործարանի տարածքում առանց վնասազերծման և այլն: **Բացի դրանից, դիմողը նաև հայտնել էր, որ՝ ներպետական օրենքի համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը հանդիսանում էր նախնական էական պայման գործարանի գործարկման համար, մինչդեռ այն արվել է միայն գործարանն աշխատացնելուց մի քանի տարի անց:**

Այս գործով Եվրոպական դատարանը նախ հիշատակել է Լոփեզ Օսթան ընդդեմ Իսպանիայի գործով իր իրավական դիրքորոշումը /տես՝ սույն հաշվետվության նախորդ կետը/, կապված Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կիրառելիության հետ: Այնուհետև, հիշատակվել է “Գեռոան և մյուսներն ընդդեմ Իտալիայի” գործով ՄԻԵԴ Մեծ Պալատի վճռի 57-րդ պարագրաֆը, որտեղ ասված էր, *որ թունավոր արտանետումների ուղղակի ներգործությունը դիմողների անձնական և ընտանեկան կյանքի վրա նշանակում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կիրառելի է:*

Եվրոպական դատարանը բերել է հետևյալ ուշագրավ հիմնավորումը. “Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կարող է կիրառվել շրջակա միջավայրի հետ կապված գործերում կամ այն դեպքում, եթե աղտոտումը ուղղակիորեն կատարված է պետության կողմից, կամ էլ՝ եթե պետության պատասխանատվությունը բխում է պատշաճ կերպով չկարգավորված մասնավոր ոլորտի գործունեությունից: Եթե գործը քննարկված է ելնելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ դիմումատուների իրավունքների իրավունքները երաշխավորելուն ուղղված խելամիտ ու համապատասխան միջոցներ ձեռնարկելու՝ պետության պոպոտիկ պարտականությունից, կամ էլ՝ ելնելով պետության միջամտությունից, որը կարող է արդարացված լինել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով, ապա կիրառվող սկզբունքները կարող են նույնական լինել: Երկու կոնտեքստում էլ անհրաժեշտ է հաշվի առնել անձի և հասարակության հակադիր շահերի միջև արդարացի հավասարակշռությունը, և երկու կոնտեքստում էլ պետությունն օգտվում է որոշակի չափերի հայեցողությամբ, երբ ընտրում է միջոցներ, որոնք անհրաժեշտ է կիրառել, որպեսզի երաշխավորել գործընթացի համապատասխանությունը Կոնվենցիային”:

Այս գործով նույնպես Եվրոպական դատարանը ճանաչել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, ինչպես նաև պարտավորեցրել է Իտալիայի կառավարությանը հատուցել դիմողի կրած բարոյական և նյութական վնասները:

3. ՄԻԵԴ-ը համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Դուբեցկայան ընդդեմ Ուկրաինայի (Dubetska v. Ukraine) գործով 18.01.2011 թվականի վճռում, Ֆադեյեվան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Fadeyeva v. Russia) գործով 09.06.2005 թվականի վճռում, Լեդյանան, Դոբրոխոտովան, Չոլոտորևան և Ռոմաշինան ընդդեմ Ռուսաստանի դաշնության (Ledyayeva, Dobrokhotova, Zolotareva and Romashina v. Russia) գործով 26.10.2006 թվականի վճռում:

Վերը նշվածներից կարելի է գալ եզրակացության, որ՝ որոշակի դեպքերում, երբ շրջակա միջավայրի աղտոտումը ուղղակիորեն ներգործում է անձի անձնական և ընտանեկան կյանքի վրա, ապա ՄԻԵԴ-ը այդպիսի գործերը դիտարկում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ՝ եթե նույնիսկ բնապահպանական գործերով վեճն անցել է ներպետական դատական ատյաններով և դիմողը պնդում է, որ դատավարությունն ընթացել է ոչ արդար, ՄԻԵԴ-ը նման գործերը չի դիտարկում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի /Արդար դատաքննության իրավունք/ տեսանկյունից, համարելով, որ խոսքը չի վերաբերում **քաղաքացիական** իրավունքներին:

Նախորդ գլուխներից մեկում նշել էինք, որ Թեդուտի հանքավայրի հետ կապված թվով 10 գործ ներկայացվել է Եվրոպական դատարան Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ու 1-ին Արձանագրության խախտման հիմքով և դրանցից 8-ով արդեն կոմունիկացիան ավարտվել է, այսինքն, ՄԻԵԴ-ը չի գտել, որ այդ գանգատներն անընդունելի են: Սակայն այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ խոսքը վերաբերում է քաղաքացիներից

պետական կարիքների համար հողամասեր վերցնելուն, ինչը համարվում է քաղաքացիական իրավունք: Այլ կերպ ասած՝ այս գործերն, ըստ էության, բնապահպանական բնույթի չեն և այդ է պատճառը, որ դրանք առնչվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Մարշալ Բադրամյան 40,
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
+374-60-612520
crm@aua.am
crm.aua.am

mlri.crm.aua.am

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION